Պատմվածք, Արձակ, Հայ գրականություն

13+

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ԻՆՁ ՓՆՏՐՈՂ ԱՂՋԻԿԸ

Ես անցնում էի փողոցով՝ հենց այնպես, ինձ համար, երբ մեկը հանկարծ ձայն տվեց.

— Ռուբե՛ն...

Մոտ վազեց մի աղջիկ՝ փոքրամարմին, երիտասարդ, երևի ինձանից հազիվ մի երկու տարով փոքր, բայց ինչ-որ երեխայական արտահայտությամբ իր գեղեցիկ դեմքի վրա: Ես նրան ճանաչում էի, բայց երբվանի՞ց, որտեղի՞ց, ո՞վ էր նա...

— Ռուբե՝ն... Ռուբե՛ն...— կրկնեց նա՝ երեխայի նման զույգ ձեռքով բռնելով իմ ձեռքը և ամուր, ամուր սեղմելով,— ինչքա՛ն եմ փնտրել քեզ...

— Բարև...— ասացի ես՝ մտքումս փնտրելով նրա անունը և, ափսոս, չգտնելով:— Բարև...

— Արդեն հինգ օր է, որ եկել եմ,— հայտնեց աղջիկը,— իսկ այսօր մեկնում եմ: Տեսնո՞ւմ ես ինչ վատ ստացվեց: Բայց ես մեղավոր չեմ, ազնիվ խոսք: Աղջիկներին հարցնում եմ՝ որտե՞ղ է Ռուբենը, ինչպե՞ս տեսնեմ նրան: Բայց ոչ ոք չգիտեր քո տեղը...

Սխալ չէր կարող լինել, ես հաստատ գիտեի, որ ճանաչում եմ նրան, ծանոթ եմ նրա հետ, բայց երբվանի՞ց, որտեղի՞ց, ո՞վ էր նա... Ինչպես երևում էր, բավական ժամանակ էր, ինչ մենք չէինք տեսել իրար: Բայց և այնպես, ինչպե՞ս կարող էի ես մոռանալ նրան: Այնքան էլ շատ չեն իմ ծանոթ աղջիկները, որպեսզի չտեղավորվեն իմ մտքի մեջ: Իսկ այս աղջիկն ամենալավն է իմ բոլոր ծանոթներից: Ինչպե՞ս կարող էի մոռանալ նրան:

— Դե պատմիր քո մասին,— խնդրեց աղջիկը,— ինչպե՞ս ես ապրում, ի՞նչ ես անում, էլի առաջվա գի՞ժն ես, թե խելոքացել ես: Դե պատմիր.. Ի՛նչ վատ է, որ ժամանակ չկա: Ես մի երկու ժամից մեկնում եմ...

Նա ինձ հետ խոսում էր դու-ով: Նա այնքան մտերիմ էր խոսում ինձ հետ և այնքան լավն էր, այնքան պարզ, անկեղծ, որ ես պատրաստ էի գրկել նրան, գգվել, սիրել: Մի՞թե ես չեմ սիրել նրան, չեմ սիրում նրան: Ինչպե՞ս կարելի է չսիրել այդպիսի լավ աղջկան: Իսկ ես նույնիսկ մոռացել եմ նրա անունը: Չհարցնե՞լ արդյոք... Բայց կարելի՞ է միթե հարցնել՝ առանց զարմացնելու նրան, առանց վշտացնելու: Նա ինձ հետ խոսում է դու-ով, նա այնքան մտերիմ է խոսում ինձ հետ, նա այնքան հարազատ է զգում իրեն՝ ինձ, իսկ ես հանկարծ հարցնում եմ նրա անունը... Եվ ի՞նչ կտա ինձ նրա անունը, ի՞նչ կպարզի, ի՞նչ կհիշեցնի: Բացարձակապես ոչինչ: Ինձ հարկավոր է հարցնել ուղղակի՝ ո՞վ ես դո՛ւ, ի՞նչ մարդ ես... Մի՞թե կարող եմ անել այդպիսի բան: Ո՛չ, ո՛չ, թող ամեն ինչ մնա այդպես: Գուցե նա ինքն ասի իր մասին՝ խոսակցության մեջ: Բայց նա չի խոսում, այլ ինքն է հարցնում իմ մասին...

— Ինչո՞ւ ես լռում, Ռուբեն... Երևում է՝ փոխվել ես, իսկապես որ խելոքացել ես: Դու առաջ այսքան ժամանակում հազար բան ասած կլինեիր: Գիտե՞ս, դու առաջ ավելի լավն էիր, եղիր առաջվա պես գիժ... Սպասիր,— ասաց նա՝ հանկարծ կանգ առնելով,— գուցե ես խանգարեցի՞, գուցե դու տե՞ղ էիր գնում:

— Ո՛չ, ո՛չ,— շտապեցի վստահեցնել նրան,— ո՛չ, ո՛չ..

— Դու ինձ ներիր, Ռուբեն, ես այնպես ուղղակի վազ տվեցի քեզ մոտ ու շատախոսում եմ: Եթե քո փոխարեն մի ուրիշը լիներ, մի՞թե կվարվեի այսպես: Սպասիր, ես քեզ թևանցուկ վերցնեմ: Իսկ հիմա, խնդրում եմ, մի գցիր ոտքերդ այդպես լայն-լայն: Եկ քայլենք ոտք ոտքի: Կարո՞ղ ես ինձ հետ:

Ես փորձեցի: Կարող էի, թեև մի քիչ դժվար էր:

Ո՞վ է նա, այ քեզ հանելուկ... Ոչինչ չեմ հիշում, ոչինչ, բացի այն բանից, որ մենք ծանոթ ենք իրար, գիտենք իրար: Այդ մեկը հաստատ է, այդ մեկը ենթակա չէ ոչ մի կասկածի:

Իսկ խոսել հարկավոր է: Ի՞նչ ասեմ, ինչի՞ մասին... Ես չգիտեմ, թե ինչ պիտի ասել նրան, հատկապես նրան: Իմանալու համար, թե ինչ պիտի ասել հիմա, պետք է հիշել, թե ինչ ես ասել անցյալում, ինչ փոխհարաբերության մեջ ես եղել նրա հետ, կարճ ասած, պետք է իմանալ, թե ում հետ ես խոսում: Ի՞նչ խոսել... Այո, նա խնդրեց, որ պատմեմ իմ մասին: Կարող եմ, իհարկե, պարզապես՝ լուռ չմնալու համար: Բայց դա ամենաքիչ հրապուրիչ նյութն է ինձ համար: Խոսելով իմ մասին՝ ես ոչինչ չեմ պարզի նրա մասին...

Ես դեռ չէի որոշել իմ անելիքը, ավելի ճիշտ՝ ասելիքը, երբ աղջիկը կանգ առավ:

— Ինձ ներիր, Ռուբեն,— ասաց նա,— ես մի երեք րոպեով մտնեմ մեր աղջիկներից մեկի մոտ: Սպասիր ինձ: Չեմ ուշանա: Տե՛ս, չփախչես...

Փոքրիկ դարպասով նա մտավ բակ, որը պատկանում էր երկհարկանի մի բավական մեծ շենքի: Շենքը, ճիշտ է, փողոցի վրա էր կանգնած, բայց մուտքը բակի կողմից էր: Այդտեղ անշուշտ ապրում էին մի քանի ընտանիքներ: Ո՞ւմ մոտ մտավ աղջիկը... Ահա դարպասից երևում է, որ բակի խորքում կան նաև ուրիշ կորպուսներ: Գուցե այնտե՞ղ մտավ նա: Գոնե գիտենայի այդքանը: Վաղը կգայի, կհարցնեի՝ ո՞վ էր այն աղջիկը, որ երեկ եկավ ձեզ մոտ... Բայց դա էլ հիմարություն է, ինձ կարող էին և չպատասխանել: Ի դեպ, հիմարություն թե խելոքություն՝ դա անհնար է, որովհետև ես չգիտեմ, թե ում մոտ մտավ աղջիկը...

Ես հանկարծ ուշադրություն դարձրի, որ արդեն անցել է տասը րոպե, իսկ նա դեռ չկա: Գուցե ընդհանրապե՞ս չկա նա, հը՞, գուցե նա գոյություն չունի՞, գուցե ես այսօր մի քիչ ավելի՞ եմ խմել գարեջուր, թեև չեմ խմել բոլորովին, գուցե դա պարզապես ոչ մի հանդիպում էլ չէ՞ր, այլ իմ սովորական երազանքներից մե՞կը, միայն թե՝ չափազանց ռեալ...

Անցավ էլի տասը րոպե: Ես վերջնականապես համոզվեցի, որ այդպիսի աղջիկ գոյություն չունի, դա թվացել է ինձ: Մի ակնարկ գցելով երկհարկանի շենքին և ափսոսանքի հառաչ արձակելով, ես հեռացա դանդաղ քայլերով: Ինձ համար միևնույնն էր, թե որ կողմ գնայի,

բայց ես, չգիտես ինչու, վերադարձա մեր եկած, այսինքն՝ իմ եկած ուղղությամբ: Երևի ուզում էի իմ երազանքից վերադառնալ նորից իրականությունը...

— Ռուբե՛ն...

Ես կտրուկ ետ շրջվեցի: Գալիս էր աղջիկը:

— Այնուամենայնիվ դու ուզում էիր փախչել:

— Ոչ, ոչ,— շփոթված արդարացա ես՝ միաժամանակ ուրախանալով, որ նա երազանք չէր, որ նա վերադարձավ,— ես շրջում էի ետ ու առաջ...

— Գնանք, Ռուբեն: Հիմա արդեն՝ ես քեզ երկար չեմ պահի: Ուշացա ընկերուհուս մոտ, հարկավոր է շտապել: Ես դեռ իրերս չեմ էլ կապել:

Մենք կանգ առանք փողոցի անկյունում: Նա էլի ինչ-որ բան էր ուզում ասել ինձ, բայց հանկարծ նկատեց մոտեցող ավտոբուսը և ասաց շուտասելուկով.

— Ինչ լավ է, ահա և իմ ավտոբուսը: Ոչ, ոչ, դու մի ուղեկցիր ինձ: Գիտես, էլի, մերոնք կարող են տեսնել մեզ և ծիծաղել ինձ վրա: Հինգ օր ոչ մի տղայի հետ չեմ հանդիպել և հանկարծ վերջին օրը... Մնաս բարև, Ռուբեն, սիրելիս...

Արդեն վազ տալով դեպի կանգ առած ավտոբուսը, նա ետ շրջվեց մի պահ և ձայն տվեց.

— Կգրես: Դու գիտես իմ հասցեն... Չծուլանաս, թե չէ կվշտանամ, ինքս էլ չեմ գրի քեզ...

Նա նստեց ավտոբուս: Ես նույնպես նետվեցի դեպի այն, բայց քթիս առաջ փակվեց դրա դուռը և դրա հետ միասին փակվեց ու մինչև հիմա էլ փակ է մնում իմ կյանքի այդ փոքրիկ հանելուկը...

Ես այլևս չտեսա նրան և ոչ էլ նամակ ստացա նրանից: Եվ այդպես մոռացված, անանուն, մնաց իմ հուշերի մեջ ինձ փնտրող աղջիկը...

Այժմ անցել են երկար տարիներ, իմ կյանքում եղել են մեծ և իսկական սերեր, չքնաղ աղջիկներ, բայց ես մտածում եմ՝ մի՞թե բոլորից ավելի լավը չէր ինձ փնտրող աղջիկը...

Գուցե նա իմ ամենամեծ սերն էր, որ մնաց չբողբոջած, գուցե և այդպես չէր, այլ անհայտությունն է ինձ այդ թելադրում: Համենայն դեպս մի բան է ինձ պարզ՝ ես մինչև հիմա փնտրում եմ նրան՝ ինձ փնտրող աղջկան:

Որտե՞ղ ես հիմա դու, ինձ փնտրող աղջիկ, կա՞ս, չկա՞ս... Խնդրում եմ քեզ՝ մի վիրավորվիր, որ ես չգրեցի այն ժամանակ: Ես մոռացել էի հասցեդ, մոռացել էի անունդ, մոռացել էի քեզ: Գիտեմ, վիրավորական է դա քեզ համար, բայց ներիր ինձ: Չէ՞ որ դու ինձ անվանեցիր գիժ: Ահա ուրեմն ներիր ինձ իմ այդ գժությունը՝ մոռանալ քեզ նման աղջկան: Դրա համար ես արդեն պատժված եմ նրանով, որ ամբողջ կյանքում չեմ կարողանում մոռանալ քեզ:

Դու բարի ու պարզասիրտ էիր, ինձ փնտրող աղջիկ: Ուստի խնդրում եմ քեզ, հիմա լինի, թե ապագայում, դեռ երիտասարդ լինես դու, թե արդեն սպիտակ մազերով, եղիր առաջվա

պես բարի ու պարզասիրտ, և եթե երբևէ տեսնես ինձ փողոցում, նորից կանչիր՝ Ռուբե՛ն, և մոտեցիր ինձ: Այս անգամ ես այլևս լուռ չեմ քայլի քեզ հետ, այլ կասեմ հազար բան և հազարից առաջ կհարցնեմ ուղղակի.

— Ո՞վ էիր դու, ինձ փնտրող աղջիկ...

1956